

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 9

03.06. 2020 թ

**1. Համալսարանի ստորաբաժանումներում 2019-2020 ուս. տարվա ավարտական աշխատանքների պաշտպանությունների և երկրորդ կիսամյակի քննաշրջանի ընթացքի վերաբերյալ.**

1.1. Ընդունել ի գիտություն:

1.2. Հանձնարարել դեկաններին՝ ուսանողների հետ իրականացնել բացատրական աշխատանքներ և մանրամասն ներկայացնել միասնական մոդուլային առարկաների քննությունների կարգը:

1.3. Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին և ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին՝ ուսումնասիրել և վերլուծել «Ընդհանուր քիմիա» առարկայից առավել շատ անբավարար գնահատականներ ստացած կուրսերի քննությունների տեսագրությունները՝ հարցին համապատասխան լուծում տալու համար:

1.4. 2020թ հուլիսի 1-ից ՀԱԱՀ հեռակա ուսուցման դեպարտամենտում, Վանաձորի և Սիսիանի մասնաճյուղերում սկսել քննաշրջանը:

**2. Համալսարանում (հեռակա ուսուցման համակարգում) ուսման վարձավճարների հավաքագրման գործընթացի վերաբերյալ.**

2.1. Հանձնարարել ՀՈԻԴ պետ Հ. Հարությունյանին և գլխավոր հաշվապահ Ա. Հայրապետյանին՝ ամփոփել և ս.թ. հունիսի 22-ին ներկայացնել ուսանողների վարձավճարների պարտքերի ամփոփ ցուցակները:

2.2. Հանձնարարել ՀՈԻԴ պետ Հ. Հարությունյանին 2018/2019 ուս տարվա վարձավճարների պարտքեր ունեցող ուսանողներին («Գյուղ. հումք» 2-րդ կուրս՝ Ղազարյան Հովհաննես, «Կենս. անվտանգություն» 2-րդ կուրս՝ Հարությունյան Կարեն) հեռագրի միջոցով տեղեկացնել վարձավճարի պարտքերի վերաբերյալ, տալ վերջնաժամկետ մինչև ս.թ. հունիսի 26-ը, իսկ հեռագրերին չպատասխանելու դեպքում ձևակերպել հեռացման հրամանները:

2.3. Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչությանը և ստորաբաժանումների ղեկավարներին, հստակ պահպանել կարգը և վարձավճարի պարտքերով ուսանողներին կուրսից կուրս չփոխադրել (առկա և հեռակա ուսուցման համակարգերում):

2.4. Հանձնարարել դեկանատներին՝ ուսանողների հետ վարձավճարների հավաքագրման վերաբերյալ քննարկումների և հեռախոսազրույցների ընթացքում ցուցաբերել կոռեկտ մոտեցում և ուսանողներին հստակ ներկայացնել նրանց պարտավորություններն ու վճարման ժամկետները:

**3. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» մասնագիտության 1-ին կուրսի ուսանող, քննության կարգը խախտած Յուրիկ Արմենի Վարդանյանին համալսարանից չհեռացնելու միջնորդության հարցի վերաբերյալ.**

3.1. Հաշվի առնելով ուսանողի առողջական վիճակը, մեղմացուցիչ հանգամանքները, ինչպես նաև ուսանողի դիմումն առ այն, որ նա ամբողջովին գիտակցում է իր կատարած գործողության լրջությունն ու զղջում դրա համար, բացառության կարգով, պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» մասնագիտության 1-ին կուրսի ուսանող Յուրիկ Արմենի Ավետիսյանին ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու պատճառով հայտարարել խիստ նկատողություն:

3.2. Հանձնարարել դեկաններին ուսանողների հետ իրականացնել բացատրական աշխատանքեր՝ հետագայում նման դեպքերից խուսափելու համար:

**4. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի «Անասնաբուծություն» մասնագիտության 2-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանողուհի՝ Սոնա Արսենի Գրիգորյանի 2019-2020 ուստարվա ուսման վարձավճարի փոխհատուցման հարցի վերաբերյալ.**

Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի «Անասնաբուծություն» մասնագիտության 2-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանողուհի՝ Սոնա Արսենի Գրիգորյանի 2019-2020 ուստարվա ուսման վարձավճարի 160 հազար դրամ պարտքը փոխհատուցել համալսարանի միջոցների հաշվին:

**5. Կրեդիտային պարտքերով 2019-2020 ուս. տարվա երկրորդ կիսամյակ փոխադրված ուսանողների կողմից կրեդիտային պարտքերի վճարումների ժամկետների խախտման հարցի վերաբերյալ.**

Հանձնարարել դեկաններին կրեդիտային պարտքեր ունեցող ուսանողների հետ իրականացնել բացատրական աշխատանքներ՝ կրեդիտային պարտքերի վճարների արագ հավաքագրման համար, և մինչև ս.թ. հունիսի 26-ը ներկայացնել արդյունքները:

**6. Հայաստանում կորոնավիրուսի համավարակի պայմաններում համալսարանի 90-ամյակի հոբելյանական միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի փոփոխության վերաբերյալ.**

6.1. Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին, SS կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին՝ քննարկել համալսարանի 90-ամյակի հոբելյանական միջոցառումների իրականացման հնարավորություններն այլ ձևաչափով և մինչև ս.թ. հունիսի 26-ը ներկայացնել առաջարկություններ:

6.2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ մինչև ս.թ. հունիսի 25-ը ներկայացնել համալսարանի երախտավորների, արխիվային նյութերի թարմացված տվյալներ:

6.3. Հանձնարարել ղեկաններին՝ կազմակերպել ուսանողական գիտական ընկերության ֆակուլտետային առցանց տեսակոնֆերանսներ:

**7. Համալսարանում 2020-2021 ուս. տարվա ընդունելության վերաբերյալ.**

7.1. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին, SS կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին, մագիստրոսական բոլոր ծրագրերի համար ձևավորել մեկ էջ ծավալով բաներներ և սկսել տարածել հայտարարությունները, տեղեկատվությունը սոցիալական տարբեր ցանցերով ու հարթակներով:

7.2. Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին և SS կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին, օգոստոս ամսից կազմակերպել արշավներ, տարածել հայտարարություններ, տեսահոլովակներ և բաներներ՝ ՀԱԱՀ քոլեջներում, հեռակա ուսուցման դեպարտամենտում և մասնաճյուղերում ընդունելության վերաբերյալ:

**8. Համալսարանում առաջիկայում իրականացվող ծրագրերի վերաբերյալ.**

8.1. Ընդունել ի գիտություն

8.2. Հանձնարարել ղեկաններին՝ համագործակցել ծրագրերի համակարգողների հետ և, հնարավորության դեպքում, նոր ուս. տարվանից ուսանողների պրակտիկաներն անցկացնել Ակունք և Ոսկեհատ տնտեսություններում:

**9. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի մագիստրատուրայի «Անասնաբուծություն» մասնագիտության հեռակա ուսուցման առաջին կուրսի մագիստրանտ Ռիմա Մերուժանի Էլբակյանին առարկայական պարտքերի հանձնման թույլտվություն տալու հարցի վերաբերյալ.**

Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի մագիստրատուրայի «Անասնաբուծություն» մասնագիտության, «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» կրթական ծրագրի հեռակա ուսուցման վճարովի

համակարգի 2019-2020 ուստարվա առաջին կուրսի մագիստրանտ Ռիմա Մերուժանի  
Էլբակյանին թույլատրել հանձնելու առարկայական պարտքերը:

10. Հեռակա ուսուցման դեպարտամենտի «Ագրոէկոնոմիկա և  
սննդարդյունաբերության էկոնոմիկա» մասնագիտության 2017-2018 ուստարվա  
առաջին կուրսի ուսումնառությունը դադարեցրած ուսանող Գառնիկ Ազատի  
Մխիթարյանի ուսանողական իրավունքների վերականգնման հարցի վերաբերյալ.

Հեռակա ուսուցման դեպարտամենտի «Ագրոէկոնոմիկա և  
սննդարդյունաբերության էկոնոմիկա» մասնագիտության 2017-2018 ուստարվա  
առաջին կուրսի ուսումնառությունը դադարեցրած ուսանող Գառնիկ Ազատի  
Մխիթարյանի ուսանողական իրավունքները վերականգնել պարտադիր  
Ժամկետային զինվորական ծառայությունից վերադառնալու կապակցությամբ և  
ընդգրկել նույն մասնագիտության 2019-2020 ուստարվա առաջին կուրսում:

11. Zoom հարթակով առցանց քննությունների կազմակերպման ընթացքում առկա  
խնդիրների վերաբերյալ.

11.1. Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ  
Դ. Հայրապետյանին և SS կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին, մինչև ս.թ. հունիսի 22-ը  
վերանայել հսկիչների ցանկը և փոխել խնդրահարույց հսկիչներին:

11.2. Հանձնարարել դեկաններին, դասախոսներին և հսկիչներին հետ  
իրականացնել բացատրական աշխատանքներ՝ առկա խնդիրները բացատրելու  
համար:

12. «ՈՒսանողական մարզական խաղեր 2019»-ում ցուցաբերած արդյունքների  
համար ՀԱԱՀ տարբեր ստորաբաժանումների ուսանողներին/աշակերտներին,  
Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դասախոսական անձնակազմին պատվոգրերի  
հանձնման վերաբերյալ.

Հանձնարարել գիտական քարտուղար Գ. Ավագյանին, ուսանողական խորհրդի  
նախագահ Կ. Ղարախանյանին և համալսարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝  
գրասենյակի աշխատակիցների օգնությամբ կազմակերպել պատվոգրերի հասցեական  
փոստային առաքում:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ